

# ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Հայր Պարթև Կիլիմեան

## ՏԵՐՈՒՍԿԱՆ ԱՂՕԹ

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս: Ամէն:

Հայր մեր որ յերկինս ես,  
Սուրբ եղիցի անուն քո:  
Եկեսցէ արքայութիւն քո:  
Եղիցին կամք քո՝ որպէս յերկինս եւ յերկրի:  
Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր:  
Եւ թող մեզ զպարտիս մեր,  
որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց:  
Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն,  
այլ փրկեա՛ զմեզ ի չարէ:  
Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն  
եւ փառք յաւիտեանս յաւիտեանց: Ամէն:



Իմաստութիւն Հօր՝ Յիսուս, տո՛ւր ինձ  
իմաստութիւն՝ ըզբարիս խորհել եւ խօսել  
եւ գործել առաջի քո յամենայն ժամ:  
Ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա՛  
զիս. եւ ողորմեա՛ քո արարածոց  
եւ ինձ՝ բազմամեղիս: Ամէն:

**Imasdootyoon Hor, Hisoos,**  
*Jesus, Wisdom of the Father,*  
**Door ints imasdootyoon,**  
*Grant me wisdom,*  
**Úzparis khorhel yev khosel yev kordzel**  
*That I may, at all times, think, speak*  
**Arachi ko hamenayn jam.**  
*And do before you that which is good in your sight.*  
**Ee char khorhúrtots, ee panits**  
*And save me from evil thoughts,*  
**Yev ee kordzots púrgya zis.**  
*words, and deeds.*  
**Yev voghormya ko araradzots**  
*Have mercy upon your creatures,*  
**Yev ints pazmameghis. Amén.**  
*And upon me, gr'cat sinner that I am. Amen.*

## THE LORD'S PRAYER

Orhnyal Der mer Hisoos Krisdos. Amen.

**Hayr mér vor hérginús és,**  
*Our Father, Who art in heaven,*  
**Soorp yéghitsi anoon ko.**  
*Hallowed be Thy name.*  
**Yégétsé arkayootyoon ko.**  
*Thy kingdom come.*  
**Yéghitsin gamk ko**  
*Thy will be done*  
**Vorbés hérginús yév hérgri.**  
*On earth, as it is in heaven.*  
**Úzhats mér hanabazort**  
*Give us today*  
**Door méz aysor.**  
*Our daily bread.*  
**Yev togh méz úzbardis mér,**  
*And forgive us our trespasses,*  
**Vorbés yév mék**  
*As we*  
**Toghoomk mérots bardabanats.**  
*Forgive those who trespass against us.*  
**Yév mi danir úzméz**  
*And lead us not*  
**Ee portsootyoon,**  
*Into temptation,*  
**Ayl púrgya úzméz ee charé.**  
*But deliver us from evil.*  
**Zi ko é arkayootyoon**  
*For Thine is the kingdome*  
**Yév zorootyoon**  
*And the power*  
**Yév park**  
*And the glory*  
**Havidyanús havidenits.**  
*Forever and ever.*  
**Amén.**

## ՀԱՒԱՏԱՄԻՔ

Կը հաւապանք ամենասուրբ Երրորդութեան՝ Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին:

Կը հաւապանք Գաբրիէլի ձեռամբ ատերումին, Քրիստոսի ծնունդին, մկրտութեան, չարչարանքներուն, իսաչելութեան, երեքօրեայ թաղումին, յարութեան, աստուածապէս համբառնալուն եւ Հօր աջակողմը նստելուն, եւ ահեղ ու փառաւոր երկրորդ գալուստին:

Կ'ընդունինք եւ կը հաւապանք: Ամէն:



## HAVADAMK CONFESSION OF FAITH

**Gū havadank amenasoorp Yerrortootyan, Horū, Vortiyin yev Soorp Hokiyan.**  
*We believe in the all-holy Trinity, in the Father, the Son and in the Holy Spirit.*

**Gū havadank Kapriyeli tseramp avedoomin, Krisdosi dzūnoontin,**  
*We believe in the annunciation of Gabriel, in the nativity of Christ,*

**Mūgūrdootyan, charcharankneroon, khatchelootyan, yerekorya taghoomin,**  
*In His baptism, His sufferings, His crucifixion, and His three-day burial,*

**Harootyan, asdvadzabes hamparnaloon yev Hor achagoghmuḥ nūsdeloon,**  
*In His resurrection, His ascension, and in His sitting at the right hand of the Father,*

**Yev ahegh oo paravor yergrort kaloosdin.**  
*And His awesome and glorious second coming.*

**Gūntoonink yev gū havadank. Amen.**  
*We confess and we believe. Amen.*



2



### ՕՐՀՆԵՐԳՈՒԹԻՒՆ ՏԻՐՈՋ

<sup>1</sup> Օրհնութի՛ւն երգեցէք Տիրոջ:

Ամբողջ սրտովս կ'ուզեմ քեզի գոհութիւն յայտնել, Տէ՛ր,  
ուղիղ վարքով ապրող մարդոց հետ, ժողովուրդիդ հետ համախումբ:

<sup>2</sup> Մեծ են Տիրոջ գործերը-

զանոնք սիրողները կը սերտեն զանոնք:

<sup>3</sup> Տիրոջ գործերը փառաւոր են եւ հիանալի,

եւ իր արդարութիւնը՝ յաւիտենական:

<sup>4</sup> Տէրը կ'ուզէ որ յիշատակուին սքանչելի գործերը իր,

թէ՛ Տէրը ինք բարեգութ է եւ ողորմած:

<sup>5</sup> Իրմէ ակնածողներուն ուտելիք կու տայ,

եւ իր ուխտը չի մոռնար բնաւ:

<sup>6</sup> Իր գործերուն զօրութիւնը ցոյց տուաւ իր ժողովուրդին,

անոնց տալով հեթանոս ազգերու երկիրը:

<sup>7</sup> Անոր գործերը արդար են եւ իրաւացի-

անոր բոլոր հրահանգները վստահելի են,

<sup>8</sup> սահմանուած՝ մնալու յաւիտեանէ յաւիտեան,

որպէսզի գործադրուին հաւատարմութեամբ եւ ուղիղ կերպով:

<sup>9</sup> Տէրը փրկութիւն դրկեց իր ժողովուրդին,

եւ հրամայեց իր ուխտը պահել յաւիտեան- սուրբ է ան, եւ ահաւոր:

<sup>10</sup> Իմաստութեան սկզբնաքայլը Տիրոջ երկիւղն է-

խելացի է ան՝ որ Տիրոջ պատուէրները կը գործադրէ:

Յաւիտենապէս անոր օրհներգութիւն պիտի մատուցուի:





# Psalm 111



<sup>1</sup> Praise the LORD.

I will extol the LORD with all my heart  
in the council of the upright and in the assembly.

<sup>2</sup> Great are the works of the LORD;  
they are pondered by all who delight in them.

<sup>3</sup> Glorious and majestic are his deeds,  
and his righteousness endures forever.

<sup>4</sup> He has caused his wonders to be remembered;  
the LORD is gracious and compassionate.

<sup>5</sup> He provides food for those who fear him;  
he remembers his covenant forever.

<sup>6</sup> He has shown his people the power of his works,  
giving them the lands of other nations.

<sup>7</sup> The works of his hands are faithful and just;  
all his precepts are trustworthy.

<sup>8</sup> They are established for ever and ever,  
enacted in faithfulness and uprightness.

<sup>9</sup> He provided redemption for his people;  
he ordained his covenant forever—holy and awesome is his name.

<sup>10</sup> The fear of the LORD is the beginning of wisdom;  
all who follow his precepts have good understanding.  
To him belongs eternal praise.



## ՅԻՍՈՒՍ ՍԻՐԵԼԻ – HISOOS SIRELI

Ո՛վ իմ Յիսուս, քեզ կը սիրեմ  
Սըրտիս հոգւոյս էն խորէն.  
Քեզ չեմ թողուր մինչեւ ի մահ,  
Բըռնէ ձեռքէս, ո՛վ Արքայ:

Փորձութիւններ սուր սուր խոցեն,  
Քեզ կը գովեն ես նորէն,  
Քու անունըդ երբ սիրտըս է,  
Չեմ վախճար ես սեւ մահէ:

Իմ Հաւատքըս ու միակ Յոյսս  
Դո՛ւն ես Փըրկիչս, սէ՛ր Յիսուս:  
Դուն ողորմած եւ օրհնաբաշխ  
Արեւս ես միշտ, կենսուրախ:

Ամէն բանըս կը նըւիրեմ  
Չոհուող Փըրկչիս իմ վըսեմ,  
Թող իմ հոգիս փըրկուի յաւէտ,  
Սուգէն, ահէն չարաղէտ:

Թէ որ այրի այս հող մարմինն,  
Կը փըրկէ զիս սուրբ արիւնդ.  
Բոլոր աշխարհի թէ որ լըթէ,  
Քեզ չեմ թողուր ես սըրտէ:

Ov im Hisoos, kez gū sirem  
Sūrdis hokvooyis en khoren;  
Kez chem toghoor minchev ee mah,  
Pūrne tserkes, ov Arkah.

Portsootyooner soor soor khotsen,  
Kez gū kovem yes noren,  
Koo anoonūt yerp sirdūs e,  
Chem vakhnar yes sev mahe.

Im Havadkūs oo miyag Hooyss  
Toon es Pūrgichs, ser Hisoos.  
Toon voghormadz yev orhnapashkh  
Arevs es mishd, gensoorakh.

Amen panūs gū nūvirem  
Zohvogh Pūrgchis im vūsem,  
Togh im hokis pūrgvi haved,  
Sooken, ahen charaghed.

Te vor ayri ays hogh marminn,  
Gū pūrge zis soorp aryoont;  
Polor ashkharh te vor lūke,  
Kez chem toghoor yes sūrde.



## ՍԻՐԱԿԱՆԻՍ ԵՐԳԸ – SIRAGANIS YERKŪ

Սիրականիս երգը կ'երգեմ  
Ու իր սէրը կը տարածեմ.  
Չունիմ, ո՛հ, ես ա՛լ ուրիշ երգ:  
Չունիմ, ո՛հ, ես ա՛լ ուրիշ երգ:  
Չունիմ, ո՛հ, ես ա՛լ ուրիշ երգ:  
Չունիմ, ո՛հ, ես ա՛լ ուրիշ երգ:

Տըրուած եմ լըման իրեն,  
Ո՛հ զինքը ես շատ հաւնած եմ.  
Կը սիրեմ իրեն մեծ սիրով:  
Կը սիրեմ իրեն մեծ սիրով:  
Կը սիրեմ իրեն մեծ սիրով:  
Կը սիրեմ իրեն մեծ սիրով:

Siraganis yerkū gerkem  
Oo ir serū gū daradzem;  
Choonim, voh, yes al oorish yerk.  
Choonim, voh, yes al oorish yerk.  
Choonim, voh, yes al oorish yerk.  
Choonim, voh, yes al oorish yerk.

Dūrvadz em lūman iren,  
Voh zinkū es shad havnadz em;  
Gū sirem iren medz sirov.  
Gū sirem iren medz sirov.  
Gū sirem iren medz sirov.  
Gū sirem iren medz sirov.

Բացաւ նա իմ աչքերը,  
Հոգիով տեսայ ես զինքը.  
Իրաւէն չըկայ նըմանը:  
Իրաւէն չըկայ նըմանը:  
Իրաւէն չըկայ նըմանը:  
Իրաւէն չըկայ նըմանը:

Patsav na im achkerū,  
Hokiyov desa yes zinkū;  
Iraven chūga nūmanū.  
Iraven chūga nūmanū.  
Iraven chūga nūmanū.  
Iraven chūga nūmanū.



## ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ - PARAPANOOTYOON

Ու սըրտիս անհուն թելերով խընդուն,  
Աստուած, իմ հոգով քեզ փառաբանեն,  
Մըտքիս թըռիչքով, երազով սիրուն,  
Աստուած, իմ սըրտով քեզ փառաբանեն:

**Ու քո փըրկարար քո սըրտի ձայնով,  
Կեանքիս ընթացքը ես քեզ նըլիրեմ:**

Ու տըրկարութեան մէջ իմ այս խեղճուկ,  
Վըշտերովս անգամ քեզ փառաբանեն,  
Եւ իմ յոյսերի լոյսերով ճախրուն,  
Աստուած, իմ հոգով քեզ փառաբանեն:

**Ու քո փըրկարար քո սըրտի ձայնով,  
Կեանքիս ընթացքը ես քեզ նըլիրեմ:**

Դու լոյսըս յաւետ, դու կեանքի աղբիւր,  
Քո խաղաղութեամբ ես գօտեպընդունեմ,  
Օ՛ դու փըրկարար, Հովիւ ինձ գըտնող,  
Քո գաւազանով ես մըլխիթարունեմ:

**Ու քո փըրկարար քո սըրտի ձայնով,  
Կեանքիս ընթացքը ես քեզ նըլիրեմ:**

Oo sūrdis anhoon teverov khūntoon,  
Asdvadz, im hokvov kez parapanem,  
Mūdkis tūritchkov, yerazov siroon,  
Asdvadz, im sūrdov kez parapanem.

**Oo ko pūrgarar ko sūrdi tsaynov,  
Gyankis ūntatskū yes kez nūvirem.**

Oo dūgarootyan metch im ays kheghdjoog,  
Vūshderovs ankam kez parapanem,  
Yev im hooyseri looyserov djakhroon,  
Asdvadz, im hokov kez parapanem.

**Oo ko pūrgarar ko sūrdi tsaynov,  
Gyankis ūntatskū yes kez nūvirem.**

Too looysūs haved, too gyanki aghpyoor,  
Ko khaghaghootyamp yes kodebūntvem,  
Oh! too pūrgarar, Hoviv ints kūdnoh,  
Ko kavazanov yes mūkhitarvem.

**Oo ko pūrgarar ko sūrdi tsaynov,  
Gyankis ūntatskū yes kez nūvirem.**

## 6

\*\*\*\*\*  
**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐՈՒՆ**  
\*\*\*\*\*

**Վերջին թելադրութիւններ, մաղթանքներ եւ բարեւներ**

**5** <sup>12</sup> Եղբարներ՛ր, կ'ուզենք որ գնահատէք եւ յարգէք անոնք՝ որոնք ձեզի համար կ'աշխատին, եւ Տիրոջ կողմէ ձեզի առաջնորդ կարգուած ըլլալով՝ կը խրատեն ձեզ: <sup>13</sup> Արժանի ամէն յարգանք ընծայեցէք անոնց եւ սիրեցէ՛ք զանոնք, իրենց տարած գործին համար: Իրարու հետ խաղաղութեամբ ապրեցէք:

<sup>14</sup> Կը խնդրենք, եղբայրներ, խրատեցէ՛ք անկարգութեամբ ապրողները, յուսադրեցէ՛ք վիատածները, պաշտպան եղէք տկարներուն, համբերատար եղէք բոլորին հանդէպ: <sup>15</sup> Նայեցէք որ ռեւէ մէկը չարիք ընողին չարիք չհատուցանէ. այլ ջանացէք միշտ բարիք ընել՝ ըլլա՛յ իրարու, ըլլա՛յ բոլորին:



\*\*\*\*\*  
**THE FIRST LETTER OF ST. PAUL TO THE THESSALONIANS**  
\*\*\*\*\*

**Final Instructions**

**5** <sup>12</sup> Now we ask you, brothers and sisters, to acknowledge those who work hard among you, who care for you in the Lord and who admonish you. <sup>13</sup> Hold them in the highest regard in love because of their work. Live in peace with each other.

<sup>14</sup> And we urge you, brothers and sisters, warn those who are idle and disruptive, encourage the disheartened, help the weak, be patient with everyone. <sup>15</sup> Make sure that nobody pays back wrong for wrong, but always strive to do what is good for each other and for everyone else.

# ԵԿԷՔ, ԱՂՕԹԵՆՔ ԻՐԱՐՈՒ ՀԱՄԱՐ...



## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔ

Ո՛վ երկնաւոր Հայրը, մեր սրտերու խորերէն քեզի փառք կու փանք բոլոր այն բարիքներուն համար որ մեզի փութի, ինչպէս նաեւ՝ քու անսահման ներողամտութեանդ համար: Կը գոհանանք քեզմէ, Տէ՛ր, մանաւանդ՝ Քրիստոսի միջոցով մեզի պարզեւած փրկութեան համար: Մեր մէջ եւ մեր շուրջ եղած բոլոր օրհնութիւններուն համար եւս կը փառաւորենք քու սուրբ անունդ:

Մեր բոլորի կեանքերուն, մեր հասկանալու կարողութեան, սիրելի փուն կազմելու, բարեկամութիւն մշակելու հնարաւորութեան, բարի լոյսին ու երկնքի անանց ուրախութիւնը վայելելու ակնկալութեան համար՝ քու զաւակներուդ հետ միասին Քրիստոսի փրկարար արժանիքով կը գոհանանք քեզմէ:

Ո՛վ Հայր, օգնէ մեզի ապրելու եւ գործելու քու կամքիդ համաձայն: Տուր մեզի երախտագէտ հոգի մը եւ Քրիստոսի բոլոր հետեւողներուն պէս բարեկամութեան բաժին՝ սիրոյ, իմաստութեան, յոյսի եւ համբերութեան վրայ հիմնուած: Տէր Յիսուսի անունով կը խնդրենք: Ամէն:

## ՏԷ՛Ր, ՈՂՈՐՄԵԱ՛ - DER, VOGHORMYA

Տէ՛ր, ողորմեա՛. Տէ՛ր, ողորմեա՛. Տէ՛ր, ողորմեա՛. Տէ՛ր, ողորմեա՛:

Der, voghormya; Der, voghormya; Der, voghormya; Der, voghormya.

Ամենասուրբ Երրորդութիւն, տո՛ւր աշխարհիս խաղաղութիւն:

Amenasoorp Yerrortootyoon, door ashkharhis khaghaghootyoon.

Եւ հիւանդաց բժշկութիւն, նրնջնցնլոց արքայութիւն:

Yev hivantats pūjūshgootyoon, nūnchetselots arkayootyoon.

Տէ՛ր, ողորմեա՛. Տէ՛ր, ողորմեա՛. Յիսուս Փրկիչ, մեզ ողորմեա՛:

Der, voghormya; Der, voghormya; Hisoos Pūrgitch, mez voghormya.

Սրբբոսի՛ կոյս, Աստուածածին, բարնխօսեա՛ր քո Միածնին:

Sūrpoohi Gooyis, Asdvadzadzin, parekhosya ko Miyadznin.

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

THE LORD'S PRAYER

ԱՅՑԵԼԵՑԷՔ ԵՒ ԴԻՏԵՑԷՔ - VISIT & WATCH

[www.FaithHopeLoveMission.org](http://www.FaithHopeLoveMission.org)

8